ՀԱՂՈՐԴՈՒՄ

*ՄԱՆՈՒՇԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ*

# ԱՐՄԻՆ ՎԵԳՆԵՐԻ ՀԱՅԱՍԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՇՈՒՐՋ

Հայ հետազոտողների կողքին Հայոց ցեղասպանության ուսումնասիրությամբ տարիներ շարունակ զբաղվում են նաև մեծ թվով օտար հեղինակներ: Նրանց զգալի մասը լուրջ ներդրում ունի խնդրի առանչառ ուսումնասիրության բնագավառում, սակայն մի մասն էլ, առաջին հերթին՝ քաղաքական նկատառումներով, ուղղակի կեղծում է պատմությունը, ծառայում հակահայ թուրքական քաղաքական շրջանակներին: Նմանատիպ «ուսումնասիրողների» մեջ վերջին շրջանում առանձնանում է գերմանացի աստվածաբան, պրոֆեսոր Մարտին Թամքեն: Նա հատկապես «հայտնի» դարձավ Հայոց ցեղասպանության ականատես, հետազոտող Արմին Թեոֆիլ Վեգների գործունեության վերաբերյալ կեղծիքներով լեցուն հրապարակումներով: Մասնավորապես «Արմին Թեոֆիլ Վեգները և հայերը. մի ականատեսի հավակնությունն ու իրողությունը» վերտառությամբ դոկտորական ատենախոսությունում հեղինակը կասկածի տակ է դնում նշանավոր հայասեր գործչի հայանպաստ գործունեությունը՝ կանգ չառնելով ամեն տեսակ շինծու և միտումնավոր մեկնաբանությունների առջև:

Թամքեի ատենախոսության գիտաքննական վերլուծությունն ու լուսաբանումը դառնում է անհրաժեշտություն, քանի որ հիմնահարցն առնչվում է մեր պատմության ամենազգայուն խնդրին՝ Հայոց ցեղասպանությանն ու հայ ժողովրդի մեծագույն ողբերգության վերաբերյալ առկա հայտնի վավերագրերի ու լուսանկարների իսկությունը կասկածելի ներկայացնելուն: Բացի այդ, այսօր Գերմանիայում նորօրյա հեղինակները, ովքեր զբաղվում են Արմին Վեգներով կամ Արևելքի խնդիրներով, Մարտին Թամքեի հիշյալ աշխատանքն օգ-

տագործում են իբրև թե որպես նորահայտ աղբյուրներ պարունակող գործ՝ առանց նյութի ճշմարտացիության և հավաստիության մեջ խորանալու:

Մ. Թամքեի աշխատանքը որքան էլ «հարուստ» է «ապացույցներով», այդուհանդերձ դրա առաջին իսկ քննությունը գիտականության ու անաչառության տեսանկյունից անվստահություն է առաջացնում[1]:

Իր աշխատանքի մեջ Թամքեն, Վեգների չհրապարակած օրագրերից և ավելի ուշ հրատարակած գրառումներից «ապացույցներով» «կանոնակարգում է» ականատեսի վկայությունները և գալիս ցնցող եզրահանգման. «Վեգների հրատարակած («Տունդարձի քառասուն օր ու գիշեր» օրագիրը) այսուհետև չի կարող դիտվել իբրև տեղահանության պատմական հավաստի աղբյուր և վկայում է հեղինակի կեղծ խիզախության մասին: Այն խորապես շահարկված է»[2]:

Սակայն, Թամքեն շուտով կրկին հավատ է տածում դեպի Վեգները: «Վեգների՝ 1916 թ. գրած պատերազմի մասին օրագիրը, սակայն, հայերի տեղահանության վերաբերյալ պատմական հավաստի աղբյուր է ...» և դրանում «... առանձին դեպքերում, որոշակի վայրերում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ ի հայտ են գալիս նոր տեղեկություններ»: Ակնհայտ է, որ հեղինակը հակասում է ինքն իրեն: Թամքեին դուր չի գալիս, որ Վեգներն առանձնահատուկ սեր է վայելել հայության շրջանում: Նրան բանաստեղծություններ են ձոնվել, 1968 թ. էջմիածնում կաթողիկոս Վազգեն Առաջինի կողմից Արմին Թ. Վեգներին շնորհվել է Սուրբ Գրիգոր Լուսավորչի շքանշան: Դա այն դեպքում, երբ, ըստ Թամքեի, Վեգները եղել է «անինքնավստահ,

---

[1] Ասվածին հիմնավոր պատասխան տալու համար անհրաժեշտ է հիշյալ աշխատանքը քննել ըստ գիտականության չափորոշիչների՝ առաջնորդվելով Մյունխենի Լուդվիգ Մաքսիմիլիան համալսարանի (Ludwig Maximillian Universität München) առաջարկած և Ալբրեխտ Բեհմելի (Albrecht Behmel) հեղինակած գիտականության չափորոշիչներով (http://www.kunstgeschichte.uni-muenchen.de/studium/ wissenschaft/wissenschaftlichkeit/index.html (Stand: 06.01.2012), http://www. student-online.net/ dictionary/action/glossary?q=Wissenschaftlichkeit (Stand: 06.01.12)).

[2] Tamcke, Martin: Armin T. Wegner und die Armenier. Anspruch und Wirklichkeit eines Augenzeugen. Habilitationsschrift. Marburg o.J., էջ 215.

մշտապես հեշտությամբ հարմարվող, հոգեշռայլ մեկը»[3]: Առավել ևս, որ գերմանացի այս հեղինակն ըստ էության Հայոց ցեղասպանության փաստը համարում է որևէ էական նշանակություն չունեցող մի «սովորական դեպք»:

Մարտին Թամքեն իր հակակրանքը Վեգների նկատմամբ չի թաքցնում: Ըստ նրա՝ երեխա ժամանակ Վեգները թուլակազմ էր[4]... «Այլ դեպքերում նա իր կյանքը կազմակերպում էր խորամանկորեն, նենգորեն և ագահորեն, հնարավորինս հաճելի...»[5], «Ի՞նչ պատմական արժեքներ կարող են ունենալ այն դիտարկումները, որոնք անում է Վեգների նման մարդը, ով աշխարհի ողջ իրադարձությունները որպես իրեն վերաբերվող է ընդունում: Նրա եսակենտրոնությունն ընթանում էր կապերի և օրենքների թերըմբռնմանը զուգընթաց ...»[6]:

Թամքեի նպատակն ակնհայտ է՝ ժխտել Վեգների ականատես լինելու փաստը, վարկաբեկել նրա փաստարկները և, ի վերջո, Հայոց ցեղասպանության իրողությունը կասկածի տակ դնել:

Այս առումով նույն հետևությանն է հանգել նշանավոր հայագետ Ալբերտ Աուշեղյանը «Արմին Վեգների հիշատակն անարգելու փորձ» հոդվածում»[7], որտեղ նա մասնավորաբար գրում է. «Պատահական չէ նաև, որ պրոֆեսոր Մարտին Թամքեն իր հոդվածներում և մենագրության մեջ ամենուրեք օգտագործում է միայն «արտաքսում» ու «տեղահանություն» բառերը, իսկ վիեննաբնակ պատմաբան Արտեմ Օհանջանյանի գերադասած «ժողովրդի սպանդ» („Völkermord") և «ցեղասպանություն» («Genozid») տերմինները համարում հայերի հավակնություն: Նրա թյուր կարծիքով հայերի հետ կատարվածը գենոցիդ անվանելը կնշանակեր գերագնահատել այն, ուստի բառի կիրառությունը «պետք է թողնել եղելության քաղաքական քննարկմանը»[8]:

---

[3] Tamcke Martin, Armin T. Wegner und die Armenier. Anspruch und Wirklichkeit eines Augenzeugen. Habilitationsschrift. Marburg o.J., էջ 215:

[4] Տես նույն տեղում, էջ 19:

[5] Նույն տեղում, էջ 64:

[6] Նույն տեղում, էջ 71:

[7] «Վէմ» համահայկական հանդես, Երևան, 2010, N 2, էջ 26:

[8] Տես Tamcke Martin, նշվ. աշխ., էջ 11:

Թամքեն իր նպատակին հասնելու համար անգամ կանգ չի առնում այնպիսի մի կեղծիքի առջև, ինչպիսին Վեգներին համասեռամոլություն վերագրելն է: «Նա երեխա ժամանակ նույնպես հակված էր համասեռամոլային հարաբերությունների,- գրում է Թամքեն,- ապա ճամփորդության ժամանակ բազմիցս տուրք էր տալիս նմանատիպ ագդակների ...» և այլն[9]: Դա այն դեպքում, երբ Վեգներն իր ժամանակակիցների մեջ հայտնի էր որպես ավանդական ընտանեկան կյանքով ապրող անձնավորություն, օրինակելի ամուսին և երկու զավակների հոգատար հայր: Անտարակույս, Թամքեի կատարած այդ քայլը հասցեագրված է հայերին, որոնց համար ընտանեկան հայեցի բարքերը վեր են ամեն ինչից:

Թամքեն շուտով բացահայտում է իր գլխավոր նպատակը՝ ամեն գնով կասկածի տակ առնել Հայոց ցեղասպանության իրողությունը փաստող վեգներյան եզակի ու արժեքավոր լուսանկարները: «Լուսանկարներից 100-ն ինքն անձամբ է նկարել, - կարդում ենք Թամքեի ատենախոսությունում, - դրանց թվում՝ լուսանկարների հավաքածուի միայն փոքր մասը հայերի արտաքսման վերաբերյալ հավաստի աղբյուր կարող է հանդիսանալ»[10]: Այս կապակցությամբ հանդես կգանք մեկ այլ հոդվածով: Միայն ավելացնենք, որ անգնահատելի է Արմին Վեգների լուսանկարների նշանակությունը՝ որպես Հայոց Մեծ եղեռնի կենդանի վավերագրերի:

Ատենախոսության վերջում Մ. Թամքեն եզրակացնում է, որ Վեգների կերպարը շինծու է՝ արհեստականորեն ուռճացված ու հերոսացված:

Զավեշտալի է, որ «պրոֆեսորը» հերթական անգամ ընկնում է հակասության մեջ: Մի կողմից նա նշում է, թե Վեգներն առանձնապես հայանպաստ գործ չի կատարել, բայց մյուս կողմից գրում է. «Թուրքական և գերմանական իշխանությունների համար ցանկալի չէր, որ գրող-սանիտարը՝ հայերի օգտին գործունեություն ծավալած

---

[9] Նույն տեղում, էջ 62, 94:
[10] Նույն տեղում, էջ 215:

գործիչը. մնա (Թուրքիայում – Մ.Մ.)»[11]: Ուստի այդ ժամանակահատվածում գերմանական զինվորական ներկայացուցչության կողմից նա ձերբակալվեց:

Թամքեի ընդգծված կողմնակալությունը երևում է այն ժամանակ, երբ նա մոռացության է տալիս Արմին Վեգների գործունեության մի շարք դրվագներ, որոնք ծանոթ են խնդրին քիչ թե շատ մոտ կանգնած յուրաքանչյուր հետազոտողի: Թամքեն կարծես մոռացության է մատնում, որ 1919 թ. ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնին Վեգները գրել է. «Որպես մեկը այն քիչ եվրոպացիներից, ովքեր սկզբից ևեթ ականատես են եղել Անատոլիայի[12] ծաղկուն քաղաքներում, բերքաշատ դաշտերում նրա (հայ ժողովրդի – Մ.Մ.) զարհուրելի բնաջնջմանը և Եփրատի ափերին, Միջագետքի անապատի քսրքարոտ ավազուտներում նրա խղճուկ մնացորդների ոչնչացմանը, ինձ իրավունք եմ վերապահում այդ թշվառության ու սարսափների պատկերները վկայակոչել ...»[13]:

Այն Վեգները, ով 1933 թ. Սուրբ զատիկի օրը նամակ գրեց Ադոլֆ Հիտլերին՝ ի պաշտպանություն հալածված հրեաների, ով Օրանիենբուրգի համակենտրոնացման ճամբարում դիմացավ կտտանքներին, Թամքեի կողմից որպես ոչ հերոս է ներկայացվում:

Դոկտոր Մարտին Ռունին Վեգների գրական ստեղծագործությունը հետևյալ կերպ է արժևորել. «Ոչ մի դեպքում չպետք է աչքաթող անել այն, որ Գերմանիայի պատմության մեջ 1933 թ. իշխանության գրավումը նացիոնալ-սոցիալիստների կողմից, ինչպես Վեգների ստեղծագործական աշխատանքի, այնպես էլ նրա աշխատությունների համար էական հետևանքներ ունեցավ՝ հանգեցնելով նրա ձերբակալմանն ու գրքերի արգելմանը, որոնք, այնուամենայնիվ, մինչ այդ օրը մոտ 300000 օրինակներից բաղկացած ընդհանուր տպաքանակի էին հասել: Լավ է հիշել, որ Գերմանիայում ֆաշիզմի օրոք արգելված գրառումների սև ցուցակում Վեգների անունն այն օրերի գերմանական գրականության լավագույն ներկայացուցիչների կող-

---

[11] Նույն տեղում, էջ 67:
[12] Փոքր Ասիայից դուրս՝ սխալ կերպով կիրառվում է Արևմտյան Հայաստանի առումով:
[13] Tamcke Martin, նշվ. աշխ., էջ 41:

քին էր դրվում: Թվարկենք դրանցից մի քանիսին՝ Բրեխտ, Բյոբլին, Ֆոյշտվանգեր, Կիշ, Հայնրիխ և Կլաուս Մանն, Ռեմարկ և Տուխոլսկի»[14]:

Այս ամենին Թամքեն հակադրվում է: Համաձայն Թամքեի ատենախոսության՝ Վեգները հայերի «հանձնարարությամբ» է վեպ գրել, պատմական դեպքերի աղավաղումների համար նրանցից բավականաչափ գումար ստացել: «Վեգները,- կարդում ենք Թամքեի աշխատությունում, - մշտապես ինքն էր իր թեմաների կիզակետում: Նա հանրային գիտակցությունն ուղղում էր դեպի հայերը՝ առանց որոնց նա էլ չէր լինի և կսուզվեր մոռացության մթնշաղում»[15]: Ապա Թամքեն շարունակում է. «Հատկապես Գերմանիայում համահայկական շարժման ավետարանչական աստվածաբանները ջանքեր թափեցին Վեգներին հաջողության հասցնելու համար ...: Աքսորված հայերը նրա համար հայկական թերթերում հայթայթում էին հոդվածներ գրելու պաստվերներ, մեծ քանակությամբ գնում էին նրա գրքերը և ահռելի գումարներ էին վճարում հայերի տեղահանությանն մասին գրվելիք վեպի համար»[16]:

Վեգներին սևացնելու մարմաջը Թամքեի ատենախոսության վերջում հասնում է բարձրակետին: Ըստ կեղծարար հեղինակի՝ Վեգներն «իր սեփական մեղքը ընդունելու փոխարեն, ... իրեն դասում է այն մարդկանց շարքը, ովքեր բարոյականության ու ճշմարտության համար պայքարում էին անբարոյականության դեմ և իրենց մատը դնում ցավոտ վերքի վրա»[17]:

Բարեբախտաբար այսօր Գերմանիայում կան շատ գիտնականներ, ովքեր Վեգների գործունեությանը նվիրված աշխատություններում սուր քննադատության են ենթարկում Թամքեին՝ իր թույլ տված կեղծիքների համար: Վկայակոչենք միայն պրոֆեսոր Անդրեաս Մայերին: 2011 թ. հրատարակած գրքում նա գրում է, թե հազվադեպ է

---

[14] Rooney Martin. „Weg ohne Heimkehr" Armin T. Wegner zum 100. Geburtstag. Ein Gedenkschrift, Bremen, 1986, էջ 52:
[15] Tamcke Martin, նշվ. աշխ., էջ 241:
[16] Նույն տեղում, էջ 174-175:
[17] Նույն տեղում, էջ 209:

լինում երբ իր իսկ ընտրած շինծու ու անփույթ նյութերով «բանասեր-ը նմանօրինակ ճշգրտությամբ որևէ մի գրողի կառչի՝ նրան նախ և առաջ վարկաբեկելու նպատակով»[18]:

Ստեֆան Ցվայգը, դեռ 1922 թ. բարձր գնահատելով Արմին Վեգների հայապաշտպան գործունեությունը, «Berliner Tageblatt» թերթում գրում էր. «... պատերազմից հետո նրա առաջին խոսքն այլևս խանդավառ չէր ... Հայոց Եղեռնի ցնցող նկարագրությունը, որ առաջինը նրա խոսքի միջոցով հայտնի դարձավ անտեղյակ Գերմանիայում, երբեք կրքի այնպիսի ուժով և առնական սրբազան ցասումով չի պատկերվել: Նրա «Երանության հարկի տակ» և «Ճանապարհ առանց տունդարձի» նշմարումներում առաջին անգամ է, որ Արևելքի աշխարհը չի ներկայացվում այլևս Պիեռ Լոտիի վարդագույն ակվարելներով: Այստեղ, վերջապես, ոչ թե սոսկ արվեստին ու էկզոտիկային ապշահար աշխարհաշրջիկն է, այլ երկիրն ու ժողովուրդն իր ամենածանր ժամին տեսած սոսկահար մարդը ...»[19]:

Վերջում ցանկանում ենք ավելացնել, որ ովքեր հայկական ողբերգության վրա կարիերա են ստեղծում, դրանով հասարակության մեջ դիրք զբաղեցնում, պետք է արժանի հակահարված ստանան: Այդ իմաստով տեղին էր 2013 թ. մարտի 12-ին Պոտսդամում հրավիրված «Ցեղասպանություն և գրականություն. Ֆրանս Վերֆելը հայկական-հրեական-թուրքական-գերմանական հեռանկարում» խորագիրը կրող կոնֆերանսում պրոֆ. Աշոտ Մելքոնյանի ելույթը, որտեղ նա դիմելով միջոցառման բանախոս Թամքեին և մասնակիցներին, նշեց, որ անթույլատրելի է հանիրավի վարկաբեկել հայ ժողովրդի օտարազգի այն բարեկամներին, ովքեր իրենց կյանքով, գործով և անվերապահ նվիրումով կիսել են հայության տառապանքն ու եղել նրա արդար դատի պաշտպանը, անգնահատելի դեր ունեցել Հայոց ցեղասպանության վերաբերյալ իրեղեն ապացույցների հավաքման ու հրապարակման գործում:

---

[18] Meier Andreas (Hrsg.), Armin T. Wegner. Die Austreibung des armenischen Volkes in die Wüste, Göttingen, 2011, էջ 190:

[19] Wegner T., AM KREUZWEG DER WELTEN Lyrik. Prosa. Briefe. Autobiographisches, I. Auflage, Buchverlag Der Morgen, Berlin, 1982, էջ 441:

Վերջում վկայակոչենք համացանցային մի կայքէջ[20], որտեղ ի չարս են օգտագործված Մարտին Թամքեի հիշյալ ատենախոսության նյութերը: Այն ընթերցելուց հետո պարզ է դառնում, թե այսօր որքան կարևոր է գիտագաղափարական պայքարը նման կեղծարարության դեմ:

*MANUSHAK MARKOSYAN*

# ON THE ASSESSMENT OF ARMIN T. WEGNER'S ARMENOPHIL ACTIVITIES


## SUMMARY

The false and fabricated approaches to the activities of famous Armenophil Armin Teofil Wegner presented in German professor Martin Tamke's Thesis for Doctor's Degree ("Armin T. Wegner and the armenians. The pretension of the eyewitness and reality") are analyzed and criticized in the article.

The necessity of scientific-political struggle against the denial of the Armenian Genocide, particularly in Germany, is underlined in the article.


[20] www.tallamenientale.com/armin-wegner.htm

*МАНУШАК МАРКОСЯН*

# ВОКРУГ ОЦЕНКИ АРМЕНОФИЛЬСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ АРМИНА Т. ВЕГНЕРА

## РЕЗЮМЕ

В статье подвергаются анализу и критике ложные и сфабрикованные подходы относительно деятельности выдающегося арменофила Армина Теофила Вегнера, представленные в докторской диссертации немецкого профессора Мартина Тамке ("Армин Вегнер и армяне: притязание очевидца и действительность").

В статье подчеркивается также необходимость научно-политической борьбы против отрицания Геноцида армян, в частности в Германии.